Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
14.03 2024թ.
N 684 L հրամանի

ԿԱՐԳ

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է դիվանագետներին կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից հանելու ընթացակարգը:

2. Դիվանագետների կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցվում են այն դիվանագետները, ովքեր ազատվել են զբաղեցրած պաշտոնից հետևյալ հիմքերով.

1) միջազգային կազմակերպություններում, Արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ, որպես միջազգային ծառայողներ աշխատանքի անցնելու կապակցությամբ, միջազգային կազմակերպությունում պաշտոնավարման ավարտից հետո.

2) Արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ՝ մեկ տարուց ավելի ժամկետով ուսանելու կամ գիտական գործունեությամբ զբաղվելու կապակցությամբ՝ նշված գործունեությունը ավարտելուց հետո.

3) օրենքով սահմանված կարգով քաղաքական, վարչական, ինքնավար կամ հայեցողական պաշտոններում պաշտոնավարման ավարտից հետո.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի, քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը) հիմքով.

5) հաստիքների կրճատման և (կամ) դիվանագիտական ծառայության մարմնի լուծարման հետևանքով.

6) մինչև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելը դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցրած անձը պաշտոնավարման ավարտից հետո.

7) դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի նշանակված չլինելու դեպքում:

3. Կադրերի ռեզերվում անձը գրանցվում է մեկ տարի ժամկետով, որի հաշվարկը սկսվում է կադրերի ռեզերվում գրանցելու մասին հրամանում նշված օրվանից:

4. Սույն կարգի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված հիմքերով դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում անձը գրանցվում է այդ հիմքերը դադարելուց հետո 30 օրվա ընթացքում:

5. Սույն կարգի 2-րդ կետի 4-5-րդ ենթակետերում նշված հիմքերով դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում անձը գրանցվում է այդ հիմքերով՝ պաշտոնից ազատվելուց հետո 30 օրվա ընթացքում:

6. Սույն կարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետում նշված հիմքով դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում անձը գրանցվում է օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնից ազատվելուց հետո 30 օրվա ընթացքում:

7. Սույն կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետում նշված հիմքով դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում անձը գրանցվում է դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո 30 օրվա ընթացքում:

8. Կադրերի ռեզերվում գրանցված անձը, բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դեպքում պաշտոնավարման ժամկետը դադարեցրած անձանց, կարող է մասնակցել «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ներքին մրցույթին:

9. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը հաշվարկվում է դիվանագիտական ծառայության ստաժի մեջ՝ առանց վարձատրության, բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետում նախատեսված դեպքում:

10. Կադրերի ռեզերվում գրանցվելու հիմքերն առաջանալու օրվանից 30 օրվա ընթացքում կադրերի ռեզերվում գրանցվելու համար սույն կարգի 2-րդ կետում նշված անձինք Արտաքին գործերի նախարարին ներկայացնում են դիմում:

11. Կադրերի ռեզերվում անձը գրանցվում է դիմում ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում, բայց դրա հիմքերն առաջանալուց 30 օրվանից ոչ ուշ:

12. Ռեզերվում գրանցվելու դիմումին անձը կցում է հետևյալ փաստաթղթերը՝

1) սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ միջազգային կազմակերպությունում ծառայության փաստը հավաստող՝ տվյալ միջազգային կազմակերպության կողմից տրված տեղեկանքը՝ ծառայության ընդունվելու և ազատվելու ժամկետների նշմամբ.

2) սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում՝ ուսման և գիտական գործունեությամբ զբաղվելու փաստը հավաստող՝ համապատասխան ուսումնական կամ գիտական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ ուսման կամ գիտական գործունեությամբ զբաղվելու ժամկետների նշմամբ, կամ վկայագիր (դիպլոմ).

3) սույն կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում՝ աշխատունակությունը վերականգնելու ժամկետի նշումով անաշխատունակության թերթիկ.

13. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված դեպքերում անձինք ռեզերվում գրանցվելու համար ներկայացնում են միայն դիմում:

14. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը չի հաշվարկվում Արտաքին գործերի նախարարությունից կամ ենթակա մարմնից օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին ռոտացիայի սկզբունքով ծառայության անցնելու

համար անհրաժեշտ ծառայության ժամկետում, ինչպես նաև հերթական դիվանագիտական աստիճան շնորհելու համար անհրաժեշտ ժամկետում:

15. Անձը կադրերի ռեզերվում գրանցվում է Արտաքին գործերի նախարարի հրամանով:

16. Կադրերի ռեզերվում գրանցումը մերժվում է, եթե դիմողը՝

1) չի պահպանել սույն կարգի 10-րդ կետում նշված՝ կադրերի ռեզերվում գրանցվելու համար դիմում ներկայացնելու ժամկետը,

2) ներկայացրել է կադրերի ռեզերվում գրանցվելու համար թերի փաստաթղթեր և դրա մասին տեղեկացվելուց հետո 5-օրյա ժամկետում չի համալրել այդ փաստաթղթերը,

3) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

4) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

5) դատապարտվել է ազատազրկման,

6) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

7) դատական կարգով զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

8) հիվանդացել է օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով:

17. Կադրերի ռեզերվում գրանցման մերժման մասին անձը տեղեկացվում է գրավոր:

18. Արտաքին գործերի նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը վարում է կադրերի ռեզերվում գրանցված անձանց ցուցակ՝ դրանում նշելով ռեզերվում գրանցված անձանց անուն, ազգանուն, հայրանունը, զբաղեցրած վերջին պաշտոնը, ռեզերվում գրանցման ամսաթիվը, գրանցման հրամանի ամսաթիվը և համարը, ռեզերվում գրանցման ժամկետը, ռեզերվից հանելու ամսաթիվը և ռեզերվից հանելու հրամանի ամսաթիվը և համարը:

19. Կադրերի ռեզերվից անձին հանելու հիմքերն են՝

1) կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը լրանալը,

2) անձնական դիմումը,

3) դիվանագիտական պաշտոնում նշանակվելը,

4) քաղաքական, վարչական, ինքնավար կամ հայեցողական պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը,

5) կադրերի ռեզերվում սույն կարգի խախտմամբ գրանցվելը,

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը,

7) ազատազրկման դատապարտվելը,

8) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը,

9) դատական կարգով որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելը,

10) օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած հիվանդությունների ցանկով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը,

11) անձի 65 տարին լրանալը,

12) օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելուց հրաժարվելու դեպքում,

13) օրենքով սահմանված այլ հիմքեր:

20. Կադրերի ռեզերվից անձը հանվում է Արտաքին գործերի նախարարի հրամանով՝ սույն կարգի 19-րդ կետում նշված հիմքերի ի հայտ գալու հաջորդ օրվանից:

21. Կադրերի ռեզերվում գրանցման և կադրերի ռեզերվից հանման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով: